**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

1. Նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը համապատասխանում է հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

5. Նախագծում առկա են հստակեցման, պարզաբանման և խմբագրման կարիք ունեցող դրույթներ: Այսպես՝

1/ նախագծի 2-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակ նշել, թե որ ծրագրի մասին է խոսքը, քանի որ օրենքով մի քանի ծրագրեր են հաստատվում:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև հավելված 4-ի 5-րդ գլխի 1-ին պարբերությանը,

2/ հավելված 4-ի 3-րդ գլխի 1-ին պարբերությունում հստակեցման կարիք ունի «ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող» արտահայտությունը: Այդ առումով վերոնշյալ արտահայտությունն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները,

3/ հավելված 4-ի 4-րդ գլխի 2-րդ պարբերությունում հստակեցման կարիքն ունի «համակարգերի գլխամասերում» արտահայտությունը:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1/ նախագծով հաստատվող հավելված 4-ի դրույթների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին,

2/ հավելված 4-ի 1-ին գլխի 1-ին պարբերությունում «2-րդ մասի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2-րդ պարբերության» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները,

3/ հավելված 4-ի 2-րդ և 3-րդ գլուխներում անհրաժեշտ է գործածել «դերիվացիոն», «ագրեգատներ», «ռեզերվային», «իռիգացիոն» բառերի հայերեն համարժեք տարբերակները՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջները,

4/ հավելված 4-ի 1-ին գլխի 4-րդ պարբերությունում «հանրապետության» բառն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 5-րդ և 7-րդ կետերին:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**